

ՀԱՄԱՌՈՑ ԳԻՏԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Մ. ՊԵՂԱՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՑՈՐԵՆԻ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՆՈՐ ԳԾԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԵՐ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Այս աշխատությունը նվիրված է նախկին Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում ցորենի Պերսիկում, Կոմպակտում և Վուլգարե տեսակներին պատկանող աշխատակիցներից ստացված գարնանացան ցորենների մի քանի հետաանկարային գծերի բնույթի ուսումնասիրությունը: Այս գծերից Պերսիկում 3/6-ը, Ֆերուգինեում 20/54-ը, Ֆերուգինեում 8-ը, էրիտրոսպերմում 6-ը, էրինացեում 13/47-ը, Իկտերինում 43/47-ը և Իկտերինում 44/52-ը ստացված են հարկադիր խաչաձևման միջոցով, իսկ Պերսիկում 18-ը, Ֆերուգինեում 10/7-ը և էրինացեում 15/11-ը՝ ազատ փոշոտման եղանակով:

Այս գծերի սերմերը ստացված են Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի Սորտաստուգման պետական հանձնաժողովի փորձագաշտի 1952 թվականի բերքից: Սրանց հետազոտությունները կատարվել են 1953 թվականին Սորտաստուգման պետական հանձնաժողովի Ապարանի շրջանի (Քասախ) փորձագաշտում, որը գտնվում է ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա և ունի լեռնատափաստանային սեահողեր [6]: Հետազոտման երկրորդ կետը եղել է Ղուկասյանի շրջանը (Վերին Ղուկասյան), որտեղ աշխատանքները նույնպես կատարվել են Սորտաստուգման պետական հանձնաժողովի փորձագաշտում, որը գտնվում է ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա և ունի նույնպիսի հողային պայմաններ, ինչպիսիք Ապարանի փորձագաշտը [6]:

Բյուսերի վեգետացիայի տեսողությունը Վերին Ղուկասյանում, համեմատած Քասախի հետ, զգալիորեն կարճ է, այստեղ գարունն ավելի ուշ է սկսվում, իսկ ձմեռն աչքի է ընկնում խստությամբ, Վ. Ղուկասյանում բերքի հասունացման շրջանում հաճախակի լինում են խոնավ, քիչ արևոտ և դով եղանակներ, որոշ տարիներում գարնանացան ցորենները լրիվ չեն հասունանում և վաղ աշնանային ցրտահարությամբ հետևանքով դեռևս լրիվ չհասունացած բերքը տուժում է:

Հետազոտման երրորդ վայրը եղել է Սեանի ավազանի ամենաբարձր կետերից մեկը՝ Մարտունու շրջանի Յանբխի պետական տոնամարտական կայանի բազան, որը գտնվում է ծովի մակարդակից 2265 մ բարձրության վրա: Այստեղ լեռնամարգագետնային հողեր են, բուսական ծածկոցն ունի մերձալպյան և ալպյան բնույթ: Յանբխը իր հողակլիմայական պայմաններով խիստ տարբերվում է Ապարանի և Վ. Ղուկասյանի պայմաններից: Բույսերի վեգետացիայի շրջանն այստեղ ավելի կարճ է, քան Ղուկասյան-

նում, դարունն ուշ է սկսվում, աշունը՝ շուտ, ձմեռը բավական խիստ է, գետինը ծածկվում է ձյան հաստ շերտով:

Յանքխում հացահատիկային կուլտուրաներից մշակվում է միայն դարին: Այստեղ հաճախ օգոստոսի երկրորդ կեսերում տեղի են ունենում ցրտահարություններ:

Վերը հիշված վայրերում ցանքը կատարվել է անջրդի հողերում, ցըրտահերկի վրա, տեղի պայմաններին համապատասխան ժամկետներում՝ Քասախում ապրիլի 29-ին, Վ. Ղուկասյանում՝ մայիսի 13-ին, Յանքխում՝ մայիսի 28-ին:

Յանքը մշակվել է մոտավորապես միանման ագրոտեխնիկական եղանակներով: Բերքահավաքը կատարվել է Քասախում սեպտեմբերի 15-ին, Վ. Ղուկասյանում՝ նույնպես սեպտեմբերի 15-ին, իսկ Յանքխում՝ նույն ամսի 28-ին:

Փորձարկման առաջին երկու վայրերում (Քասախ, Վ. Ղուկասյան) բույսերը եղել են լրիվ հասունացած, իսկ Յանքխում փորձարկվող զծերից միայն Պերսիկում 3/6 զիծն է եղել լրիվ հասունացած, մնացած զծերը, դանդաղելով աճման ու դարգացման տարրեր ֆազերում, ենթարկվել են սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած ցրտահարություններին:

Պարզվել է, որ փորձարկվող զծերը արտաքին պայմաններում իրենց տարրեր ձևով են դրսևորել: Այդ տարրերությունները որոշվել են բույսերի մի շարք քանակական հատկանիշների, օրինակ՝ նրանց բարձրության, հասկի երկարության, հատիկակալման, 1000 հատիկի կշռի և այլնի չափումների միջոցով: Անալիզի արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Տվյալներից երևում է, որ ցորենի բույսի աճման ու դարգացման վրա ցանքի վայրի պայմանների ազդեցությունն զգալի է: Այդ պայմանների ազդեցությամբ ռեակցիա տալու տեսակետից աչքի են ընկել Ֆերուզինում 7/10, Էրիտրոսպերմում 6 և Էրինացեում 13/47 զծերը: Եթե սրանք համեմատենք ըստ հիշյալ վայրերի, ապա կտեսնենք, որ Քասախում փորձարկվող Ֆերուզինում 7/10 զծի հասկում եղած հատիկների միջին թիվը 3,2-ով ավել է Վ. Ղուկասյանի ցանքի հասկերից և 14,5-ով՝ Յանքխի հասկերից: Հասկում եղած հատիկների կշիռը 0,42 գրամով ավելի է Վ. Ղուկասյանում ստացված հասկերից և 0,92 գրամով՝ Յանքխից: 1000 հատիկի կշիռը 8,0 գրամով ավելի է Վ. Ղուկասյանում ստացվածից և 16,8 գրամով՝ Յանքխից:

Քասախում աճեցրած Էրիտրոսպերմում 6 զծի մեկ հասկի հատիկների միջին թիվը Վ. Ղուկասյանի ցանքից վերցրած հասկի հատիկների թվից ավելի է 6,6-ով, իսկ Յանքխի հասկի հատիկների թվից՝ 8,3-ով:

Քասախում ստացված հասկի հատիկների միջին կշիռը, համեմատած Վ. Ղուկասյանի ցանքի հետ, ավելի է 0,4 գրամով, համեմատած Յանքխի հետ՝ 0,54 գրամով: Նույն զծի Քասախի ցանքից վերցված 1000 հատիկի կշիռը, Վ. Ղուկասյանի ցանքից վերցված հատիկների հետ համեմատած, ավելի է 7,86 գրամով, իսկ Յանքխի հետ համեմատած՝ 13,46 գրամով:

Միևնույն շրջանի պայմաններում ուժեղ տարրերություններ են նկատվել ինչպես տարրեր տեսակներից ստացված զծերի մոտ (Պերսիկում 3/6, Ֆերուզինում 20/54, Իկտերինում 43/47 և Էրիտրոսպերմում 6), այն-

Յորենի մի քանի քանակական հատկանիշների արտահայտութիւնը էկոլոգիական պայմանների տեսակետից միմյանցից տարբեր միջավայրերում

Պօկերի անվանումը	Ծ ա ն ք ի վ ա յ ր ւ																	
	Քառաթիւ	Վ. Ղուկասյան	Յանըթիւ	Քառաթիւ	Վ. Ղուկասյան	Յանըթիւ	Քառաթիւ	Վ. Ղուկասյան	Յանըթիւ	Քառաթիւ	Վ. Ղուկասյան	Յանըթիւ	Քառաթիւ	Վ. Ղուկասյան	Յանըթիւ	Քառաթիւ	Վ. Ղուկասյան	Յանըթիւ
	Բույսի միջին բարձրութիւնը սմ			Հասկի միջին երկարութիւնը սմ			Հատիկակալման տոկոսը			Հասկում եղած հատիկների թիւը			Հասկում եղած հատիկների կշիռը (գ)			1000 հատիկի կշիռը (գ)		
Պերսիկում 3/6	103	97	96	8,7	7,5	7,0	94,8	93,6	93,6	29,4	26,7	28,5	0,85	0,78	0,69	29,00	28,70	24,42
Պերսիկում 18	96	96	97	7,2	6,8	6,6	97,4	97,3	91,4	38,5	32,8	22,3	1,01	0,85	0,43	26,88	26,50	19,70
Ֆերուգինեում 20/54	105	102	103	9,0	8,3	7,1	92,8	91,0	86,4	31,1	28,4	23,2	10,2	0,78	0,52	32,88	26,47	22,41
Ֆերուգինեում 7/10	105	102	93	9,2	9,1	7,1	94,6	93,9	82,1	37,5	34,3	23,0	1,30	0,88	0,38	33,20	25,20	16,35
Ֆերուգինեում 8	105	100	102	9,1	8,4	7,6	96,6	95,3	91,3	34,2	28,8	21,1	1,10	0,78	0,47	32,36	27,00	22,71
Էրիտրոսպերմում 6	104	99	100	8,8	7,5	7,6	96,6	94,1	91,5	32,1	25,5	23,8	1,0	0,63	0,46	32,76	24,90	19,30
Էրինացեում 13/47	103	95	94	5,9	5,0	4,1	97,0	95,1	84,9	39,7	37,2	22,5	1,10	0,90	0,26	28,80	23,12	11,56
Էրինացեում 13/11	102	100	100	6,1	5,1	5,1	95,0	94,9	94,0	39,8	31,7	28,4	1,02	0,80	0,56	26,50	24,60	20,0
Իկտերինում 43/47	95	95	88	6,1	4,9	4,1	97,0	93,80	86,9	43,2	39,6	24,6	1,30	0,95	0,41	30,60	25,20	16,6
Իկտերինում 44/52	100	100	99	5,7	5,1	5,1	96,2	95,2	93,8	36,3	31,4	24,2	0,99	0,83	0,42	27,40	26,80	17,0

պես էլ նույն ալյատեսակից ստացված գծերի մոտ (Պերսիկում 3/6 և Պերսիկում 18, էրինացեում 13/47 և էրինացեում 15/11):

Ստացված տվյալները վկայում են, որ ցածր ջերմաստիճանը, ազդելով բույսերի վրա վերջիններիս հասունացման շրջանում, զգալի չափով դանդաղեցրել է նրանց հասունացումը, պատճառ դառնալով վաղ աշնանային ցրտահարության (Յանրխ):

Ծորենի հատիկների որակի վրա տարբեր արտաքին պայմանների ազդեցությունը պարզելու նպատակով բերքահավաքը կատարվել է միանվագ և այնուհետև որոշվել է հատիկների որակը՝ ըստ նրանց արտաքին տեսքի: Ստացված արդյունքները բերված են աղյուսակ 2-ում:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ում բերված տվյալներից, մեր ուսումնասիրած ցորենների հատիկները զգալի չափով տարբերվում են միմյանցից: Այսպես, որինակ, մեր ուսումնասիրած ցորեններից Պերսիկում 3/6 գծի հատիկները Քասախում լրիվ հասունացել են, լցվել և իրենց հատուկ կարմիր գույնն ստացել: Նույնը տեղի է ունեցել նաև Վ. Ղուկասյանում: Յանրխում ստացված հատիկների մեջ պատահում են չմշկվածներ, բայց ընդհանուր առմամբ սրանց հասունացումը լրիվ է:

Պերսիկում 18 գծի հատիկները Քասախում հասունացել են և նորմալ գույն ու կարմրություն ստացել, Վ. Ղուկասյանի հատիկների մեջ նկատվել են հատ ու կենտ չմշկվածներ: Հատիկների գույնը եղել է մուգ կարմիր և կարմիր:

Յանրխում հատիկները իրենց հասունացման մոմային շրջանում ցածր ջերմաստիճանի ազդեցության տակ ձեռք են բերել մոխրագույն երանգ և լրիվ լեցունություն չեն հասել:

Մյուս բոլոր ցորենները՝ Ֆերուգինեում 20/54, Ֆերուգինեում 7/10, Ֆերուգինեում 8, էրիտրոսպերմում 6, էրինացեում 13/47, էրինացեում 15/14, Իկտերինում 43/47 և Իկտերինում 44/52 լրիվ հասունացման չհասած վիճակում տուժել են ցրտերից և կորցրել իրենց լիարժեքությունը: Ուրեմն, մեր ուսումնասիրած ցորեններից միայն Պերսիկում 3/6 գիծն է, որը Յանրխի բարձրության պայմաններում լիարժեք հատիկներ է տվել իսկ մնացած ցորենները ետ են մնացել:

Հատիկների միջև առաջանցել են նաև որակական տարբերություններ: Ինչպես այդ պարզվել է քիմիական կազմի անալիզի միջոցով: Ստացված տվյալները բերված են աղյուսակ 3-ում:

Ինչպես տեսնում ենք, էկոլոգիական տարբեր պայմաններում փորձարկվող միևնույն ցորենի հատիկների սպիտակուցների քանակը տարբեր է: Քասախում, որտեղ ուսումնասիրվող ցորենների հատիկները լրիվ հասունացած են եղել, սպիտակուցների քանակը ավելի մեծ է. Ֆերուգինեում 20/54 գծինը՝ 14,35⁰/₀, իսկ էրինացեում 15/11 գծինը՝ 13,5⁰/₀: Յանրխի պայմաններում նույն գծերի հատիկները, ցրտահարման պատճառով լրիվ հասունացած չլինելով, համեմատաբար քիչ քանակությամբ են սպիտակուցներ կուտակել, ընդ որում Ֆերուգինեում 20/34-ը՝ 12,71⁰/₀, իսկ էրինացեում 15/11-ը՝ 12,35⁰/₀: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սպիտակուցների քանակությունը, ըստ աղյուսակ 3-ի տվյալների, համեմատաբար ցածր գոտուց դեպի բարձրը իջնում է, որը պայմանավորված է ոչ

Տարբեր հոգակլիմայական պայմանների ազդեցությունը ցորենի զօերի հատիկների վրա

	Հ ե տ ա զ ո տ մ ա ն վ ա յ ը ը		
	Ք ա ս ա խ	Վ. Ղ ու կ ա ս յ ա ն	Յ ա ն ը խ
1	2	3	4
Պերսիկում 3/6	Մուգ կարմրավուն, երկարավուն, լեցունությունը նորմալ:	Մուգ կարմիր, երկարավուն, լեցունությունը նորմալ:	Բաց կարմրավուն, երկարավուն, լեցունությունը նորմալ, բայց հատ ու կենտ չմշկվածություն է նկատվում, լրիվ հասունացած:
Պերսիկում 18	Խայտաբղետ, մի փոքր երկարավուն, լեցունությունը նորմալ, զույնը կարմիր:	Մուգ կարմիր, երկարավուն, լեցունությունը նորմալ, բայց հատ ու կենտ չմշկվածություն է նկատվում:	Բաց մոխրագույն, երկարավուն, լեցունությունը նորմալից մի փոքր ցածր, հատ ու կենտ չմշկված, մոմային հասունացման շրջանում ցրտի ազդեցություն կրած սերմեր:
Ֆերուգինեում 20/54	Խայտաբղետ (հիմնականում բաց կարմրավուն), լեցունությունը նորմալ:	Կարմրավուն, երկարավուն, լեցունությունը նորմալ, բայց հատ ու կենտ չմշկվածություն է նկատվում:	Մոխրագույն (ֆոնը կանաչ), երկարավուն, փոքր ինչ չմշկված, լեցունությունը նորմալից ցածր: Մոմային հասունացման շրջանում ցրտի ազդեցություն կրած սերմեր:
Ֆերուգինեում 7/10	Խայտաբղետ, երկարավուն, լեցունությունը նորմալ:	Բաց կարմրավուն, երկարավուն, խոր ափսիկով, փոքր չմշկվածությամբ՝ մասսայական:	Մոխրագույն, երկարավուն, ուժեղ չմշկված կաթնային հասունացման վերջին շրջանում ցրտի ազդեցությունը կրած սերմեր:

1	2	3	4
Ֆերուզինեում 8	Մուգ կարմրավուն (փայլող մակերեսով), մի փոքր երկարավուն, լեցունութիւնը նորմալ:	Բաց կարմիր, երկարավուն, լեցուն, բայց հատ ու կենտ չմշկված:	Մոխրագույն, երկարավուն, ուժեղ չմշկված, մոմային հասունացման շրջանում, ցրտի ազդեցութիւն կրած սերմեր:
Էրիտրոսպերմում 6	Մուգ կարմրավուն (փայլող մակերեսով), կլոր, լեցունութիւնը նորմալ:	Բաց կարմիր, երկարավուն, խոր ափսիկով, մասսայական չմշկածութիւն է նկատվում:	Մոխրագույն, երկարավուն, ուժեղ չմշկված, մոմային հասունացման շրջանում ցրտի ազդեցութիւն կրած սերմեր:
Էրինացեում 13/47	Կարմիր, կլոր, լեցունութիւնը նորմալ, բայց հատ ու կենտ, մի փոքր չմշկվածութիւն է նկատվում:	Կարմրավուն, կլոր, լեցուն, բայց հատ ու կենտ չմշկված:	Մոխրագույն, շատ ուժեղ չմշկված, կաթնային հասունացման շրջանում ցրտի ազդեցութիւն կրած սերմեր:
Էրինացեում 15/11	Մուգ կարմրավուն (փայլող մակերեսով), կլոր, լեցունութիւնը նորմալ:	Կարմրավուն, կլոր, լեցուն, բայց հատ ու կենտ չմշկված:	Մոխրագույն, փոքր չմշկված, լրիվ չհասունացած, մոմային հասունացման շրջանում ցրտի ազդեցութիւն կրած սերմեր:
Իկտերինում 43/47	Կարմրավուն, փայլող մակերեսով, կլոր, լեցունութիւնը նորմալ:	Բաց կարմրավուն, կլոր, լեցուն, բայց հատ ու կենտ չմշկված:	Մոխրագույն, ուժեղ չմշկված, լրիվ չհասունացած, մոմային հասունացման շրջանում ցրտի ազդեցութիւն կրած սերմեր:
Իկտերինում 44/32	Կարմիր, կլոր, լեցունութիւնը նորմալ:	Կարմրավուն, կլոր, լեցուն, բայց հատ ու կենտ չմշկված:	Մոխրագույն, ուժեղ չմշկված, լրիվ չհասունացած, մոմային հասունացման վերջին շրջանում ցրտի ազդեցութիւն կրած սերմեր:

Աղյուսակ 3

Տարբեր հոգակլիմայական պայմանների ազդեցությունը ցորենի հատիկների բխիական կազմի վրա

Ցորենի գծերը	Ազդեցությունը տեղանքով		
	Քառախում	Վ. Ղուկասյանում	Յանքիում
Ֆերուգինեում 20/54	14,35	13,74	12,71
Էրինացեում 13/11	13,05	12,80	12,37

միայն գոտիների տարբերությամբ, այլև, ամենայն հավանականությամբ, տարբեր առախմանի հասունությամբ:

Այս աշխատանքի բնթացքում խնդիր է դրվել պարզելու նաև հատիկների հասունությամբ առախմանի ու նրանց ծխանակությամբ միջև եղած կապը: Այս հարցը կարևոր է, որովհետև մեր լեռնային շրջաններում հաճախ է պատահում, որ ցանքերը, այդ թվում նաև սերմնաբուծական ցանքերը, ցրտերի պատճառով հնձվում են հատիկների հասունացումից առաջ, ընդ որում այս կամ այն չափով ցածր ջերմաառախմանի ազդեցությամբ ենթարկված: Սույն հարց է ծագել, թե ոչ լրիվ հասունացած և ցրտերի ենթարկված հատիկների ծխանակություներ ինչքանով է պահպանվում կամ տուժում:

Սերմերը, նրանց ծխանակություներ և ծխան տեղակայումներ պարզելու նպատակով ձևցման են դրվել երկու կրկնողությամբ, 19—20°C ջերմության պայմաններում: Ծլման էներգիան որոշելու համար ծլած սերմերի հաշվառումը կատարվել է՝ ձևցման գնելու հաջորդ օրից սկսած (10/11 1953 թ.) մինչև (1/IV 1953 թ.):

Փորձարկվող գարնանացան ցորենների գծերի սերմերի ծլման տեղակայումներ վերաբերող տվյալները, որոնք զբաղված են բոլոր նրանց մշակության վայրերի, ներկայացված են աղյուսակ 4-ում: Տվյալներից երևում է, որ հասունացման տարբեր շրջաններում գտնվող սերմերի ծխանակության էներգիան տարբեր գծերի մոտ տարբեր է: Օրինակ՝ Քառախում ստացված Պերսիկում 3/6 գծի սերմերը 2 օրում ծլել են 100%-ով, Վ. Ղուկասյանում ստացված սերմերը 3 օրում՝ 99%-ով, իսկ Յանքիում ստացված սերմերը 10 օրում ծլել են 99%-ով: Քառախում ստացված Ֆերուգինեում 20/54 գծի սերմերը 4 օրում ծլել են 99%-ով, Վ. Ղուկասյանում ստացվածները 14 օրում՝ 100%-ով, իսկ Յանքիում ստացված նույն գծի սերմերը 24 օրում՝ 67%-ով:

Քառախում ստացված Էրինացեում 13/47 գծի սերմերը 2 օրում ծլել են 106%-ով, Վ. Ղուկասյանում ստացված սերմերը 4 օրում ծլել են 99%-ով, իսկ Յանքիում ստացված նույն գծի սերմերը 51 օրում ծլել են 43%-ով: Այսպիսի տարբերություններ նկատվում են նաև մյուս գծերի մոտ: Գրականությունից [1, 2, 3, 4, 5] հայտնի է, որ հարավի լեռնային շրջաններում և մեր Միության հյուսիսային հացահատիկային շրջաններում հացահատիկային կուլտուրաների հասունացումը համընկնում է աշնանային ցուրտ և խոնավ եղանակներին, որի հետևանքով սերմերի ծլման էներ-

դիման խիստ ընկճում է: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ մեր ուս-
ողությունների բարձր-լեռնային շրջաններում ցանքերը մինչև ցրտերն ընկ-
նելը չեն հասունանում: Իսկ ցածր ջերմաստիճանը բացասաբար է ազդա-
դառնում նախ սերմերի հասունացման, ապա նաև նրանց ծլունակությամբ
և ծլման էներգիայի վրա:

Նույն աղյուսակի տվյալներից երևում է, որ բարձր-լեռնային պայ-
մաններում համեմատաբար հասուն, բնդ սրում ծլունակությամբ օժտված
սերմեր է տալիս Պերսիկում 3/6 գիծը, որը, ինչպես պարզվում է, ուսում-
նասիրվող գծերից ամենավաղահասն է:

Պետք է նշել, որ այն գծերի սերմերը, որոնք ենթարկվել են ցածր
ջերմաստիճանի ազդեցությանը և որոնց ծլման տևողությունը եղել է 15
օրից ավելի, ծլած սերմերի որոշ մասը աննորմալ ծիլեր է ունեցել: Այս
աննորմալությունն արտահայտվել է մի քանի ձևով.

1. Սերմերը կտույց են տվել, բայց հետագայում չեն աճել:

2. Սերմերից առաջացել են վտիտ տերևներ, իսկ արմատիկները չեն
աճել: Նկատվել է նաև հակառակ երևույթ՝ արմատիկներն աճել են, բայց
տերևներ չեն առաջացրել:

3. Սերմերը ծիլուց հետո առաջացած տերևները և արմատիկները
շատ վտիտ են եղել, իսկ արմատիկներից մեկը կամ երկուսը թերի են
զարգացել:

4. Գեղքեր են նկատվել, երբ սերմի ծիլերն աճելով շարժվել են հա-
տիկի թաղանթի տակով և դուրս եկել սերմի հակառակ ծայրից (բաշիկից)
կամ ոլորվել են թաղանթի տակ, իսկ արմատիկները աճել են նորմալ:

Վերը նշված երևույթները հատկապես նկատվում են Յանբիսի պայ-
մաններում ստացված սերմերի մոտ: Այդ երևույթը վկայում է այն մա-
սին, որ ցրտի ազդեցությունը կրած սերմերի որոշ մասը զրկվում է
նորմալ ծիլու ընդունակությունից:

Ա մ փ ո փ ու մ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի գենետիկա-
յի և սելեկցիայի ինստիտուտում ստացված գարնանային ցորենի մի քա-
նի հիբրիդային գծեր փորձարկվել են Հայաստանի մի շարք շրջաններում՝
Ապարանում, Վերին Ղուկասյանում և Մարտունու շրջանի Յանբիսի կոչվող
սովսոզի տերիտորիայում: Մրանք բույրն էլ, առավել ևս Յանբիսը, հողա-
դորձությամբ բարձր դասի են համարվում: Մեր ուսումնասիրած ցորեննե-
րի քանակական հատկանիշները՝ բույսերի բարձրությունը, հասկի մե-
ծությունը, հատիկակալումը, հատիկների կշիռը, վերը նշված վայրերում
աարերի ձևով են արտահայտվել, բայց էականը սրանց հասունացումն է և
լիարմեք բերք տալը:

Փորձարկված 10 գծերից մեկը՝ Պերսիկում 3/6-ը, բավական վաղա-
հասություն է ցուցաբերել և լրիվ հասունություն է հասել նույնիսկ Յանբի-
սի պայմաններում:

Այսպիսի վաղահաս ցորենի ասկայությունը կարևոր է, որովհետև

բարձր-լեռնային դառում ցորենները հաճախ լրիվ չեն հասունանում, հատիկները, ցածր աստիճանի ցրտերի ենթարկվելով, խիստ խցեցնում են իրենց ծլունակությունը, որը շատ կարևոր է մանավանդ ցանքից սերմացու սպասելու դեպքում, իսկ Պերսիկում 3/6 և նման վաղահաս ցորենները հնարավորություն են տալիս ցորենը ավելի բարձր-լեռնային դառններում մշակելու:

Պարտք եմ համարում շնորհակալություն հայտնելու բնկ. Վ. Հ. Գուլբանյանին, որի գեկավարությամբ կատարվել է այս աշխատանքը:

ՀՍՍՏ Գյուղատնտեսության
Երկրագործության ինստիտուտ

Ստադիա և 10 VI 1956

С. М. ПИВАЗЯН

ИЗУЧЕНИЕ НЕКОТОРЫХ КОЛИЧЕСТВЕННЫХ ПРИЗНАКОВ НОВЫХ ГИБРИДНЫХ ЛИНИЙ ЯРОВЫХ ПШЕНИЦ В РАЗЛИЧНЫХ ЭКОЛОГИЧЕСКИХ УСЛОВИЯХ

Р е з ю м е

Новые гибридные линии яровой пшеницы, полученные в Институте земледелия Министерства сельского хозяйства Армянской ССР были изучены в Апаранском, Гукасянском и Мартуниском районах республики. Место изучения в первом районе — сел. Касах — находится на 1850 м над уровнем моря, во втором районе — сел. Верхний Гукасян — на 2000 м и в третьем районе — Яных — на 2265 м. Указанные районы — высокогорные, а с. Яных является пределом земледелия.

Из испытанных 10 линий одна (Персикум 3/6) оказалась наиболее раннеспелой, выявление такой линии было важно, так как в подобных районах пшеницы обычно не успевают созреть и образуют неполноценные семена, лишенные прорастаемости. Наличие такой линии, как Персикум 3/6, дает возможность повысить зону возделывания пшеницы.

Դ Ր Ա Վ Ա Ն Ի Ն ՈՒ Ն ՈՒ Ն

1. Колесник И. Л. Солнечный обогрев и термическая сушка семян озимой пшеницы. Журнал „Агробиология“, 6, 1953.
2. Кралин П. Воздушно-тепловой обогрев семян. Газета „Соц. земледелие“, 78 (5570), от 1 апреля, 1950.
3. Ларионов Д. К. Спелость, зрелость и прорастание семян. Записки Московского сортово-семянного техникума, 1927.
4. Лысенко Т. Д. Влияние термического фактора на продолжительность фаз развития растений. Сельхозгиз, Москва, 1949.
5. Лысенко Т. Д. О некоторых основных задачах сельскохозяйственной науки. Доклады ВАСХНИЛ, вып. 56, 1942.
6. Միրիմանյան Խ. Պ. Համասեռ ակնարկ հայաստանի հողերի մասին, Երևան, 1953: